

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՌՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 8

ք. Երևան

25.12.2008թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 66-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ Ս. Սարգսյան:

### Օրակարգում .

1. Ոեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2007-2008 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:
2. ԵՊՀ 2008թ. եկամուտների և ծախսերի կատարողականի (հումվար-նոյեմբեր) հաստատում:
3. ԵՊՀ 2009թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:
4. ԵՊՀ 2009/2010 - 2013/2014 ուստարիների զարգացման ռազմավարական ծրագրի հիմնադրույթների հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2007-2008 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:

### Զեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

Ա. Սիմոնյան - ԵՊՀ խորհրդի մեծարք՝ Նախագահ, խորհրդի հաղործան անդամներ Երևանի պետական համալսարանի տարեգրության մեջ 2007/2008 ուսումնական տարին կմնա որպես կրթագիտական բազմաթիվ ծրագրերի կյանքի կոչման, ձեռքբերումների, նոր մտահղացումների ժամանակահատված:

Ժամանակի հրամայականի թելադրանքով և բուհական կրթությանը ներկայացվող արդի միջազգային պահանջներին համապատասխան՝ հաշվետու տարում ԵՊՀ-ում շարունակվել են աշխատանքները ուսումնական գործընթացի կատարելագործման, համակարգային փոփոխությունների, ուսուցման տեխնոլոգիական հենքի զարգացման

և նորացման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման և այլ ուղղություններով։ Իրականացվող բարեփոխումների տիրույթը ներառել է համալսարանի գործունեության բոլոր ոլորտները։ Եղել են թե՝ զգալի հաջողություններ և ձեռքբերումներ, թե՝ թերացումներ և ձախողումներ։ Բնականաբար, բուհի գործունեության արդյունավետության գործակցի չափը պայմանավորված է բոլոր ասպարեզներում նրա հաջողությունների՝ բացթողումների նկատմամբ առավելությամբ։ Այս տեսակետից ակնհայտ են կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և մեթոդների նորացման, կրթության բովանդակության հարստացման և որակի բարձրացման ուղղությամբ գործընթացների դրական արդյունքները։

Աշխատանքներն ակտիվացել են նաև գիտական բնագավառում։ Շարունակվել են նախկինում սկսված ծրագրերը և գործողության մեջ են դրվել բազմաթիվ նոր ծրագրեր, տարրեր չափերի դրամաշնորհներ, որոնց իրականացման գործընթացներին մասնակցել են հարյուրավոր համալսարանականներ՝ դասախոսներ, գիտաշխատողներ, ասպիրանտներ և ուսանողներ։

2007/2008 ուսումնական տարուա ԵՊՀ-ն շարունակել է համագործակցությունը աշխարհի տասնյակ գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքել համագործակցության նոր պայմանագրեր։ Իրականացվել և շարունակվում են դասախոսների և ուսանողների փոխանակության, համատեղ միջոցառումների անցկացման, թեմատիկ աշխատանքների կազմակերպման մի շարք ծրագրեր։

ԵՊՀ-ում ձեռնարկված բարեփոխումները հաշվետու ժամանակաշրջանում ներառել են նաև տնտեսական գործունեության ոլորտը։ Համալսարանի տարրեր մասնաշենքերում, ուսումնաբարտադրական և հանգստի բազաներում իրականացվել են բարեկարգման ու վերանորոգման մեծածավալ աշխատանքներ։ Գիտակրթական գործընթացներն արդյունավետ կազմակերպելու համար ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ, միջոցառումներ են ձեռնարկվել նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ։

Իբրև կարևորագույն հիմնախնդիր՝ բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել ու մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը։ Միջոցառումներ են ձեռնարկվել մասնավորապես առավել կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու, ինչպես նաև համալսարանականների հանգստի կազմակերպման ուղղությամբ։

Երևանի պետական համալսարանը եղել ու մնում է մեր երկրում բարձրագույն կրթության առաջատարը։ Տասնյակ տարիներ շարունակ մայր բուհը բարձր վարկանիշ է ապահովել նաև միջազգային գիտակրթական ասպարեզում, մրցակից ու գործնկեր եղել աշխարհում հայտնի կրթօջախներին։ Իբրև ուսումնական, գիտական և

մշակութային նշանավոր կենտրոն՝ ԵՊՀ-ում պարբերաբար հյուրընկալվում են պետական ու հասարակական բազմաթիվ գործիչներ, Հայաստան այցելած տարբեր երկրների ղեկավարներ, հանրապետությունում գործող արտասահմանյան դիվանագիտական կենտրոնների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Այժմ ավելի հանգամանալից անդրադառնանք Երևանի պետական համալսարանի՝ 2007/2008 ուսումնական տարվա գործունեությանն ըստ ոլորտների:

Ուսումնական գործընթացի կազմակերպման գործումնեությունում շարունակվել և ընդլայնվել են կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը: Այստեղ առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել ուսումնական պահանջման պերակառուցման վրա: Այս գործընթացում ձևավորվել է և միասնական կանոնակարգային և նորմատիվային այն հենքը, որով ԵՊՀ-ում իրականացվում են կոթական գործընթացները: Զեավորվել է միասնական նորմատիվային և կազմակերպական հենք, գիտելիքների ստուգման, գնահատման և առաջադիմության արժենորման միանգամայն նոր համակարգ: Սակայն այս բարեփոխումների գործընթացում եղել են և կան խնդիրներ: Ուսումնական միավորներում առկա է որոշակի անտարբերություն. սա մեր ամենալուրջ խնդիրն է առ այսօր, որովհետև ոչ բոլոր միավորներն են, որ ուսումնական բարեփոխումների ընթացքում եղել են ակտիվ: Ուսումնական ծրագրերի և պահանջման որակը դեռևս չի կարող բավարարել մեզ: Բավական շատ են բովանդակային տարբերություններ բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի միջև և մագիստրոսական ծրագրերը որոշակիորեն չեն տարբերվում բակալավրիատի ծրագրերից: Ծրագրերի կառուցվածքային փոփոխություններն ամենակին չեն ուղեկցվել համապատասխան բովանդակային փոփոխություններով, ծրագրերում ներմուծված չէ «Եվրոպական չափայնությունը»: Եվ դրանց մեջ հատկապես պետք է ընգծել այն, որ մեր ուսանողներին դեռևս խորթ է ինքնուրույն աշխատանքի այն բաժնեմասը, որը գոյություն ունի համաձայն Բոլոնյան համաձայնագրի: Քիչ է գործի դրվուած էլեկտրոնային կառավարման համակարգը: Երկրորդ ոլորտը որտեղ բարեփոխումներ են իրականացվել նախորդ ուսումնական տարում, որակի գնահատման ապահովման և վերահսկման համակարգի հետագա կատարելագործումն է: Ընդ որում կատարվել են կանոնակարգային, ընթացակարգային, գնահատման միասնական հենք ստեղծելուն ուղղված աշխատանքներ, բարձրացվել է մեթոդական խորհուրդների աշխատանքի արդյունավետությունը, ներդրվել է գիտելիքների գնահատման նոր բազմագործուն համակարգ: Եվ, ամենակարևորը համալսարանում սկսել է ակտիվորեն գործել կորպորատիվ համալսարանի մոդելը: Հարգարժան գործընկերներ, պետք է նշել, որ սա

ժամանակակից համալսարանը բնութագրող ամենակարևոր ցուցանիշներից մեկն է: Ցավոք սրտի, համալսարան-գործատու կապի ամրապնդումը հայրենական գործատուների կողմից այնքան էլ ընկալելի չէ, թեև, հարկ է նշել, որ կորպորատիվ համալսարանի հասկացությունը արդեն իսկ ներդրվել է խոշոր գործընկերություների հետ համատեղ: Տարբեր հաստատությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա կազմակերպվել են 1581 ուսանողի ուսումնական (որից 574-ը՝ դաշտային) և 4049 ուսանողի արտադրական ու մանկավարժական պրակտիկաները: Սակայն, հարկ է նշել, որ պրակտիկաների անցկացման համար կան լուրջ օբյեկտիվ դժվարություններ՝ կապված մի կողմից՝ պրակտիկայի անցկացման բազային հիմնարկների հագեցվածության ցածր մակարդակի և պահանջվող վարձատրության տարեցտարի աճող չափի, իսկ մյուս կողմից՝ անբավարար բյուջետային հատկացումների հետ:

Դասախոս-ուսանող հարաբերակցությունը նախորդ ուսումնական տարում հասավ մեկը տասին և առաջիկա երեք-չորս տարիների ընթացքում այս հարաբերակցությունը պատրաստվում ենք հասցնել մեկը տասնչորսին, որը համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

Նախորդ ուսումնական տարում ինտենսիվ աշխատանքներ են տարվել դիմորդների հետ և ընդունելության ժամանակ այդ գործունեության արդյունքներն ակնառու էին՝ հատկապես բնագիտական թերթ ֆակուլտետներում: Կարծում ենք այս ուսումնական տարում համալսարանականներս պետք է շարունակենք այդ գործունեությունը, քանի որ ԵՊՀ-ն վաղուց մոնոպոլիստ չէ և մնան մրցակցային պայմաններում ԵՊՀ-ն պետք է գտնվի իր բարձրության վրա և արագորեն արձագանքի շուկայի պահանջներին: Աշխատանքներ են տարվել դասախոսների վերապատրաստման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ, բայց այստեղ պետք է փաստել, որ համալսարանի շատ օդակներ գտնվել են պասիվ վիճակում: Հաշվետու ժամանակահատվածում զարգացել են ԵՊՀ տեղեկատվական ռեսուրսները: Տեխնիկապես ապահովվել են շատ ստորաբաժանումներ և հատկապես բարձր մակարդակով կատարվել է ծրագրային ապահովումը: Սակայն ներքին ցանցի օգտագործման մակարդակը ցածր է եղել հատկապես ուսումնաօժանդակ կազմի կողմից: Նոր ուսումնական տարում սա պետք է դարնա դեկանատների և ռեկտորատի հիմնական խնդիրներից մեկը: Հատկապես հեռառությունան տեղեկատվական համակարգերի մշակմամբ և ներդրմամբ ԵՊՀ-ն, ինչպես և ՀՀ բարձրագույն կրթական համակարգը հետ է մնում արտասահմանյան գործընկերությունց:

Գիտահետազոտական աշխատանքների բնագավառում մենք ունեցել ենք նոր ձեռքբերումներ: Շարունակվել է 147 թեմայով գիտահետազոտական աշխատանքների կատարումը, որոնցից 116-ը՝ պետական ֆինանսավորմամբ, 31-ը՝ միջազգային

գիտատեխնիկական ծրագրերով: ԵՊՀ-ում գործում են 18 գիտահետազոտական լաբորատորիաներ, 11 գիտական կենտրոններ և մեկ ինստիտուտ: Երկրորդ ինստիտուտը արդեն կազմավորվել է և նորաստեղծ սկզբության ամբիոնի հետ միասին կկազմեն կուռ համակարգ հայագիտության ոլորտում: Անցած ուսումնական տարում գիտական ուսումնասիրություններ կատարվել են բոլոր ֆակուլտետներում, ինչը և արտահայտվել է տպագրված գրքերով և հոդվածներով (44 դասագիրք, 75 ուսումնական և 73 ուսումնամեթոդական ձեռնարկ, 67 մենագրություն, 1650 հոդված, գիտաժողովի 525 թեզիս): Ուրախալի է, որ մեծապես ավելացել է միջազգային և հանրապետական գիտաժողովներում մեր դասախոսների մասնակցությունը: Սակայն շարունակում է մտահոգիչ մնալ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացման հարցը, որովհետև մի բան է ունենալ հրատարակված արդյունք, մեկ այլ բան է այդ աշխատանքի արդյունքը ներդնել արտադրության և սպառման ոլորտ: Այս հարցում մեզ կօգնի գիտական տեխնոպարկի հրատապ ստեղծումը: Մենք ուսումնասիրել ենք արտասահմանյան փորձը և կարծում ենք մենք ի վիճակի ենք լուծել այս հարցը՝ իհարկե պետական աջակցության և այլ բուհերի հետ համագործակցության միջոցով:

Անհրաժեշտ է ավելի շատ ասպիրանտներ և հայցորդներ ներգրավել գիտական թեմաների մեջ: Այդ տեսակետից թեև որոշակի առաջընթաց կա, սակայն հարկավոր է այն ընդլայնել: Իհարկե ասպիրանտուրայի որակը մեզ դեռևս չի գոհացնում և ասպիրանտուրան չի կարողանում ամբողջովին արտացոլել այն գիտահետազոտական ուղղությունները և պահանջները, որոնք այսօր առկա են մեր երկրում:

Շարունակվել է գրադարանի ավտոմատացման համակարգի ներդրումը և, կարծում ենք, մենք այն շուտով ավարտին կհասցնենք: Շատ կարևոր է այն, որ ԵՊՀ գրադարանն այսօր հուսալի գործընկեր է ոչ միայն հանրապետության գրադարանների, այլև արտասահմանյան շատ համալսարանների և գիտական կենտրոնների գրադարանների համար:

Հաշվետու տարում ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել 170 անուն գիրք, որը հրատարակչության մոտ իննունամյա պատմության մեջ ամենաբարձր ցուցանիշն է: Ուրախալի է, որ տարեցտարի ավելանում է բուհական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների թիվը. ներկայումս այն անցնում է 80-ից: Լույս են տեսել ֆակուլտետների խորհուրդների կողմից հրատարկության երաշխավորված գրեթե բոլոր գրքերը. 55 անուն գիրք:

Երևանի պետական համալսարանը, ինչպես նախորդ տարիներին, 2007/2008 ուսումնական տարում ևս շարունակել է միջազգային համագործակցությունը օտարերկրյա համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ: Ներկայումս

համալսարանը պայմանագրեր և համաձայնագրեր է կնքել աշխարհի շուրջ 40 երկրների 146 համալսարանների և հաստատությունների հետ: Անցած ուստարվա ընթացքում արտերկրի տարբեր համալսարանների և գիտական կենտրոնների հետ համագործակցության ծրագրերի շրջանակներում իրականացվել են ԵՊՀ դասախոսների, մասնագետների և ուսանողների գիտառուսումնական փոխայցեր: Տարբեր ֆակուլտետներից և վարչական կազմից 298 համալսարանականներ գործողվել են արտասահմանյան 30-ից ավելի երկրների գիտակրթական հաստատություններ: Միջազգային համագործակցության ոլորտում ԵՊՀ-ի խնդիրները հիմնականում կապված են տարբեր օլակների ակտիվության հետ: Ստեղծվել է այնախիսի վիճակ, երբ որոշ անթիոններ սպասում են, որ ռեկտորատը կամ վարչական այլ ստորաբաժանումներ իրենց պետք է ներկայացնեն պատրաստի ծրագրեր: Կցանկանայի, որ բոլոր համալսարանականները այս հարցում ցուցաբերեին ակտիվություն, քանի որ այդ համագործակցությունը մեզ թույլ է տալիս լուծել օրակարգային բազմաթիվ հարցեր:

Այս ոլորտում մեր հիմնական խնդիրներից մյուսը արտասահմանցի ուսանողների ներգրավումն է մեր կրթական գործունեության մեջ: Հատկանշական է նաև այն, որ անցյալի հետ համեմատ դրանց թիվը բավական պակասել է: Հիմա էլ ցանկացողները բավական շատ են, սակայն նրանց մասնագիտական, լեզվական գիտելիքները այնքան ցածր են, որ մենք ստիպված ենք լինում նրանցից հրաժարվել: Մեզ համար հատկապես կարևոր է ուսանողություն ունենալ սփյուռքահայ գաղթօջախներից, որոնց թիվը տարեցտարի նվազում է:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում որոշակի աշխատանքներ են տարվել սոցիալական քաղաքականության իրականացման ուղղությամբ: Մասնակի փոփոխության է ենթարկվել ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուիական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը՝ առաջադիմության ցուցանիշների ավելի բարձր պահանջների սահմանումով:

Դասախոսական կազմի արդյունավետ աշխատանքի խթանման, ինչպես նաև նյութական բարեկեցության աճի ապահովման նպատակով հաշվետու տարում մշակվել և ընթացիկ ուստարվանից համալսարանում ներդրվել է նաև տարբերակված վարձատրության համակարգը, որը հիմնված է տարբեր բնագավառներում դասախոսի գործունեության արդյունավետության գնահատման որոշակի ցուցանիշների և դրանց կատարողականի վրա: Այս միջոցառումը միտված է թե՝ որակյալ ու արդյունավետ աշխատանքը նյութապես խրախուսելուն և թե՝ գործի հանդեպ աշխատակիցների կողմից շահագրգռվածություն ու պատասխանատվություն հանդես բերելուն:

Պետք է ասեմ, որ մեր ուսանողական կառույցները բավական մեծ ինտենսիվությամբ աշխատում են և անցած ուսումնական տարում այս կառույցների կողմից աշխատանքներ են տարվել ուսանողների տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ։ Առաջին կուրսեցիներին տեղեկատվություն հասցնելու ուղղությամբ ամենամեծ նվազումներից է եղել «Առաջին կուրսեցու փաթեթի» պատրաստումը և անվճար տարածումը։

Ուզում եմ հատկապես կարևորել ուսանող-շրջանավարտ-գործատու կապի ամրապնդումը։ Հաշվետու տարում շրջանավարտների և կարիերայի կենտրոնն ընդլայնել է իր համագործակցությունը գործատուների հետ՝ վերջիններիս շարքում ընդգրկելով նոր կազմակերպություններ։ Արյունքում՝ կենտրոնում գրանցվող թափուր հաստիքների մասին հայտարարությունների թվաքանակը կտրուկ աճել է։ Կենտրոնը հայտերը տարածում է ֆակուլտետներում՝ համապատասխան պատառներ փակցնելով համալսարանի տարածքում առկա ցուցատախտակներին։

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը տարբեր գործատուների հետ համագործակցության շրջանակներում աջակցել է վերջիններիս՝ ներկայացնելու իրենց կազմակերպությունը ԵՊՀ ուսանողներին։ Նման փոխգործակցության շրջանակներում գործատուներին տրամադրվել են դահլիճներ, լսարաններ։ Կազմակերպություններն անցկացրել են թեստեր, սեմինարներ, հարցազրույցներ։ Ուսանողները ծանոթացել են կազմակերպությունների գործունեությանը, իսկ կազմակերպությունները հնարավորություն են ստացել ներկայանալու ապագա մասնագետներին։

Մեր ուշադրության կենտրոնում են եղել ուսանողների կարգուկանոնի պահպանման իիմնախնդիրները։ Համալսարանականները ակտիվ պայքար են տարել ինչպես ուսանողների, այնպես էլ աշխատակիցների վայելուց պահվածք, դիրքորոշում, տեսակետ ձևավորելու հարցում։ Այս տեսակետից տարին դժվար էր և ընդհանուր առնամբ համալսարանը պատվով դուրս եկավ իր առջև դրված կարևորագույն խնդրից։ Սակայն վաղուց անցել են ժամանակները երբ մենք միայն դասախոս էինք, այժմ մենք նաև մեր ուսերին պետք է վերցնենք մանկավարժի դերը։ Եվ սերնդի դաստիարակման հարցը պետք է իրենց վրա վերցնեն համալսարանականները։ Ուսանողների մշակութային դաստիարակության հարցում մեծ ներդրում է ունեցել նաև ԵՊՀ մշակույթի կենտրոնը։ Կարծում եմ, որ ուսանողի ազատ ժամանակի կազմակերպումը մեր առաջնահերթ խնդիրներից մեկն է։

Նախորդ ուսումնական տարին ցույց տվեց, որ Երևանի պետական համալսարանը իիրավի իր առջև ունի բազմազան ու բարդ խնդիրներ։ Ինչոր խնդիրներ մենք չկարողացանք լուծել, ինչ-ինչ խնդիրներ կարողացանք որոշակի մակարդակի վրա լուծել, կարծում եմ, որ նախորդ տարվա մեր ուսումնական

գործունեությունը, չնայած բացթողումներին և սխալներին, մենք պետք է հաջողված համարենք: Եվ իմ խորին համոզմամբ Երևանի պետական համալսարանը եղել է, կա և դեռ երկար տարիներ կմնա համամարդկային արժեքների վրա հենված, պետության կողքին կանգնած հաստատություն՝ հավատարիմ իր առաքելությանը և ունի այն ներուժը, որն անհրաժեշտ է այդ առաքելությունն իրականացնելու համար:

Սրանով ցանկանում են ավարտել ին ելույթը և ուրախ կլինեմ պատասխանելու ձեր հարցերին:

*Ելույթից հետո հայտարարվեց հարցերի հերթագրում: Ձեկուցողին հարցեր չեղան:*

**Հայտարարվեց Ելույթների հերթագրում:**

**Գրանցվեցին խորհրդի անդամներ Վ. Դումանյանը, Լ. Շելյանը, Ա. Ավետիսյանը Ս. Գրիգորյանը, Կ. Կարապետյանը:**

**Վ. Դումանյան** - Խորհրդի մեծարգո Նախագահ, հարգելի անդամներ, Ես առաջարկում են միանշանակ հավանություն տալ ԵՊՀ ռեկտորի հաշվետվությանը և երրորդ հարցի հետ կապված, որպեսզի նորից Ելույթ չունենամ, կցանկանայի մեկ հանգամանքի վրա կանգ առնել: ԵՊՀ խորհրդի ստեղծումը նորամուծություն էր համալսարանական կյանքում և իր գոյության բոլոր տարիներին, մինչ ԵՊՀ խորհրդի ստեղծումը, համալսարանը կառավարվել է գիտական խորհրդի կողմից: Այսօր մեր կողմից քննարկվող և հաստատվող բյուջեն լավ կլիներ, որ քննարկվեր մեր գիտական խորհրդում, առավել ևս, որ այն ամրագրված է ԵՊՀ կանոնադրությունում:

**Լ. Շելյան** - Մենք բոլորս ժամանակին ստացել ենք խորհրդի օրակարգով սահմանված հարցերի փաստաթղթերը և այն հաշվետվությունը, որն այստեղ ռեկտորը շատ հակիրճ ներկայացրեց: Ես կցանկանայի Ձեր ուշադրությունը կենտրոնացնել ԵՊՀ-ի դեմ ուղղված տարբեր իրապարակումներին հանրապետական մամուլում: Կցանկանայի, որ բոլորս ուշադրություն դարձնեինք ԵՊՀ-ի հեղինակության բարձրացնամը: Ինչպես նաև կցանկանայի իմ շնորհակալությունը հայտնել ԵՊՀ խորհրդի նախագահին համալսարանական ընտանիքներին ցուցաբերած աջակցության համար: Կցանկանայի անդրադառնալ նաև մեկ այլ կարևոր հարցի, որ ԵՊՀ-ն աշխատում ու գործառում է նորմալ, իսկ աշխատանքային գործընթացը ի շնորհիվ ռեկտորի ջանքերի ընթանում է արդյունավետ և անընդհատ: Եվ մեր բոլորի սրբազն պարտքն է աջակից լինել այդ գործընթացին:

**Ա. Ավետիսյան** - Խորհրդի մեծարգո Նախագահ, հարգելի խորհուրդ, ես կցանկանայի երկու խոսքով անդրադառնալ վարվող քաղաքականության, ԵՊՀ աշխատանքային արդյունավետության հարցերին, որոնք, բնականաբար տեղ են գտնի ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ: Ինչպես հասկանալի էր աշխատանքների հիմնական ուղղությունն է միջազգային կրթական գործընթացներին և համակարգին ինտեգրումը և այստեղ մենք հույս ունենք, որ Երևանի պետական համալսարանը պետք է լինի այդ գործի առաջանարտիկը և ուղենիշ լինի մյուս բուհերի համար: Ինչքան է արդյունավետ իրականացվում այդ գործընթացը կախված է բուհի տարբեր օղակների աշխատանքից և արդյունավետ լուծումները նախ և առաջ մեր պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձեռքբերումներն են: Կարծում եմ, որ 2010թ.-ի սահմանագծին մենք արդեն կունենանք հստակ աշխատող մեխանիզմ: Այստեղ շատ կարևոր է երիտասարդների ներգրավում: Իհարկե առաջընթաց կա, որ բոլոր ասպիրանտները ներգրավված են գիտահետազոտական թեմատիկ աշխատանքներում: Սակայն ոչ բոլոր ասպիրանտներն են ստանում իրենց լսարանային ժամերը: Բոլոնյան համակարգում մյուս գործընթացը ուսանողների և դասախոսների համար ուղեցույցների պատրաստումն է: Սա շատ կարևոր է, քանի որ առանձին հանձնարարականները, որոնք տրվում են, առանձին գործընթացները որոնք սկսվում են հետևողական չենք լինում նրանց արդյունավետության ստուգման հարցերում: Հայաստանում այդ աշխատանքների ծավալը մեծացել է և արդյունավետությունը նկատելի է դարձել: ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը բավարար պատասխաններ է տալիս այս հարցերին, սակայն պետք է նաև հիմնավոր մշակել արտասահմանցի ուսանողների հետ աշխատանքի բոլոր սկզբունքները և մեխանիզմները: Առաջարկում են հաշվետվությունը գնահատել բավարար:

**Մ. Գրիգորյան** - Խորհրդի մեծարգո Նախագահ, հարգելի անդամներ մենք լսեցինք ռեկտորի հաշվետվությունը և ես գտնում եմ, որ այնտեղ հակիրճ ամփոփվեց այն աշխատանքը, որը Երևանի պետական համալսարանը կատարել է նախորդ ուսումնական տարվա ընթացքում և այն առաջարկում են գնահատել բավարար: Համալսարանը իր գոյության բոլոր տարիների ընթացքում միշտ էլ եղել է կրթության և գիտության զարգացման կենտրոնը և նրան երբեք օտար չեն եղել այն բոլոր հարցերը, որոնք ծագել են մեր պետության առջև և համալսարանականները միշտ նեցուկ են եղել այդ հարցերի լուծմանը և ուրախացել են բոլոր ձեռքբերումներով: Այսօր էլ ավելի է մեծանում համալսարանի դերը, քանի որ նրա խորհուրդը նախագահում է հանրապետության մեծարգո Նախագահը: Այս տարի համալսարանում բավական արդյունավետ փոփոխություններ կատարվեցին: Զեավորվեց Աշխարհագրության և

Երկրաբանության ֆակուլտետը, որը, միավորելով Երկու ֆակուլտետների գիտական ներուժը, կկարողանա լուծել հանրապետությունում և համալսարանում առկա այդ ոլորտի կարևորագույն խնդիրներ: Ինչպես նաև մենք կարողացանք ձեռք բերել գիտահետազոտական և ուսումնական նպատակների ծառայող անհրաժեշտ սարքավորումներ: Իհարկե կան նաև բացթողումներ, որոնք ոչ այնքան ռեկտորատի, որքան դեկանների, դեկանատների և ամբիոնների բացթողումներն են: Մենք պետք է սկսենք աշխատանքը մեզանից և բոլորս էլ դրա կարիքն ունենք: Կցանկանայի շնորհակալությունս հայտնել ռեկտորատին, որը միշտ իր ուշադրության կենտրոնում է պահում ուսումնական և գիտական աշխատանքները և ես որպես դեկան միշտ այդ աջակցությունը զգացել եմ:

**Կ. Կարապետյան -** Խորիրդի մեծարգո Նախագահ, հարգելի ռեկտոր, խորիրդի հարգելի անդամներ կցանկանայի խոսել ինձ չափազանց հուզող մեկ խնդրի մասին, որը վերաբերվում է սիյուռքում ապրող մեր երիտասարդների ուսուցումը համալսարանում կազմակերպելուն: Մենք պետք է փորձենք կազմակերպել համալսարանական ուսուցումը ռուսերենի հենքի վրա և նաև այստեղ շարունակենք նրանց կողմից հայերեն լեզվի պարտադիր ուսուցումը: Մենք լսեցինք ռեկտորի հաշվետվությունը, իհարկե, նրա աշխատանքը դժվար է, սակայն տարեցտարի բարելավվում են համալսարանական աշխատանքները: Խնդիրները շատ են, սակայն համալսարանական կոլեկտիվի և ռեկտորի համատեղ ջանքերի շնորհիվ այդ խնդիրները դաշնում են լուծելի: Ես գտնում եմ, որ ԵՊՀ 2007-2008 ուսումնական տարվա գործունեությունը կարող ենք գնահատել բավարար: Շնորհակալություն:

**Ա. Սիմոնյան -** Ներկայացնեմ մի քանի նկատառումներ ինչած ելույթների վերաբերյալ: Նախ անդրադառնամ այն հարցին, թե ինչու ԵՊՀ գիտական խորիրդում չի քննարկվել բյուջեն: Բանն այն է, որ ԵՊՀ կանոնադրության 10-րդ հոդվածի 13-րդ կետը սահմանում է, որ ԵՊՀ Գև-ն առաջարկություններ է ներկայացնում ԵՊՀ բյուջեի վերաբերյալ: Առաջարկություններ անելը դեռևս չի նշանակում հաստատել, իսկ մենք տարվա ընթացքում գիտական խորիրդի նիստերում բազմիցս լսել ենք տարբեր առաջարկություններ եկող տարվա նախահաշվի վերաբերյալ: Ինչպես նաև տեխնիկական հնարավոր չեն բյուջեն կազմել դեկտեմբերից շուտ, քանի դեռ չի հաստատվել ՀՀ պետական բյուջեն:

**Ա. Սարգսյան (խորիրդի նախագահ) -** Պարուն Սիմոնյան, առաջարկում են խորիրդի նիստից առաջ բյուջեի նախագիծը քննարկել նաև գիտական խորիրդում, լսել առաջարկություններ, դրանով իսկ նախագիծը առավել շատ կողմնակիցներ կունենա:

**Ա. Սիմոնյան** - Համաձայն եմ պարոն Նախագահ, թե ինչքանով այն կլինի արդյունավետ չեմ կարող ասել, սակայն կազմակերպչական առումով հաջորդ տարում մենք դա կիրականացնենք: Ինչ վերաբերվում է ասպիրանտական լսարանային ժամաքանակներին, ապա մենք արդեն որոշել ենք ասպիրանտների ժամաքանակները եռակի ավելացնել և մենք հետևում ենք, որ նրանք գործնականում դրանք կատարեն և առանց դրանց կատարողականի ոչ մի ասպիրանտ չի երաշխավորվի պաշտպանության: Ինչ վերաբերվում է սփյուռքահայ ուսանողների ուսումը կազմակերպելուն, ապա մեզ շատ են խանգարում հանրակացարանային պայմանների բացակայությունը, սակայն կան նաև այլ օբյեկտիվ պատճառներ: Հարևան Երկրներից դիմում են այնպիսի դիմորդներ, որոնց լեզվական մակարդակը չի բավարարում մեր կողմից ուսուցումը կազմակերպելու պահանջներին: Եղել են նաև դեպքեր, որ ՀՀ-ում ուսուցումը արտասահմանցիները փորձում են օգտագործել որպես Եվրոպական այլ երկրներ տեղափոխվելու ձանապարհ: Սակայն մեզ առավել անհանգստացնում է սփյուռքահայ ուսանողների տարեցտարի նվազող հոսքը: Այստեղ մենք անելիքներ շատ ունենք և պետք է լինենք նրանունակ ու ապահովենք այն որակը, որ սփյուռքահայ ուսանողը նախընտրի մեր բուհը այլ արտասահմանյաների շարքում, իսկ սա ամենօրյա աշխատանքի արդյունք կարող է լինել: Ինչպես նաև պետք է ընդունենք, որ օտար լեզուներով դասավանդող մեր դասախոսները խիստ պակասել են, որը միայն մեր բուհի խնդիրը չի: Ծնորհակալություն:

Ելույթներից հետո ԵՊՀ խորհրդի նախագահը առաջարկեց քվեարկության միջոցով ընդունել որոշում հաստատելու ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2007-2008 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և այն գնահատել բավարար:

Կողմ`66, Դեմ` 0, Զեռնպահ`0:

## 2. ԵՊՀ 2008թ. եկամուտների և ծախսերի կատարողականի (հունվար-նոյեմբեր) հաստատում:

**Զեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան**

**Ա. Սիմոնյան** - ԵՊՀ խորհրդի մեծարգո՛ Նախագահ, խորհրդի հարգարժա՞ն անդամներ եկամուտների և ծախսերի հաշվետվությունը նույնականացնելու համար մանրամասնությամբ Զեզ ներկայացված է և ես կանգ կառնեմ միայն մի քանի կարևոր

դրույթների վրա: Այս տարվա տասնմեկ ամիսների ընթացքում նախատեսված բյուջեն կատարվել է 91,3%-ով:

Հաստատված նախահաշվից շեղումները գտնվել են ռեկտորի հայեցողությանը տրամադրված փոփոխությունների 10%-ի սահմաններում և կատարվել են հիմնականում երեք հոդվածներում: Գերածախսերը հիմնականում կատարվել են պետական բյուջե կատարվող վճարումներում, հիմնանորոգման և ծառայությունների ձեռքբերման ծախսերում: Այդ գումարները փոխառուցվել են հետևյալ հոդվածներից՝ գոասենյակային, կրթական բարեփոխումների անցկացման, շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և կարիերայի զարգացման միջոցառումների, ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսերից:

Պլանավորված մուտքերն ամբողջովին կատարվել են:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում: Գրանցվեց Վ. Սարգսյանը :

**Վ. Սարգսյան** - Ես կցանկանայի երկու հարց ուղղել բյուջեով նախատեսված, սակայն չժախսված գումարների մասին, որոնք հատկապես նկատելի են երկու հոդվածներում: Առաջինը կրթական բարեփոխումների անցկացման համար նախատեսված է չորս միլիոն դրամ և որևէ դրամ չի ծախսվել, դա արդյոք նշանակում է, որ բարեփոխումների անցկացման կարիք չի եղել, ինչպես նաև գրադարանային ծախսերում կա 71% կատարողական և մի՞թե գրադարանը այնքան լավ վիճակում է, որ գումարներ տնտեսելու հնարավորություն է եղել: Երկրորդ հարցս նորից վերաբերվում է գրադարանային ծախսերին՝ այստեղ տասնինգ միլիոն թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար է վճարվել և իինգ միլիոն՝ գրքերի ձեռքբերման: Արդյոք այդ հարաբերակցությունը տրամաբանական է՝ և կարելի՝ է ունենալ բաժանորդագրված ամսագրերի ցանկը, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրություն եղել է, թե՝ ոչ, քանի որ միջազգային ամսագրերը առավել մատչելի են էլեկտրոնային տարբերակներով:

**Ա. Սիմոնյան** - Ծնորհակալություն հարցերի համար: Սկսեմ վերջին հարցի պատասխանից: Այո, մենք ունենք էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրություն և բոլոր համալսարանականները կարողանում են օգտվել մի քանի հարյուր էլեկտրոնային ամսագրերից: Եվ հենց Զեր կողմից մատնանշված տասնինգ միլիոնից նաև հատկացվում է նշված ռեսուրսների բաժանորդագրությանը: Մենք նաև ստանում ենք բավական թանկ արժեցող գիտական ամսագրեր: Ինչ վերաբերվում է նրան, որ գրքերին տրամադրված է երեք անգամ ավելի քիչ գումար, ապա մենք բավական շատ

գրքեր ստանում ենք նվիրատվություն բարերարներից կամ այլ աղբյուրներից: Նշեմ ավելին, որ վերջերս համալսարանականները նվիրաբերում են իրենց անձնական գրադարանները: Մենք մի քիչ կաղում ենք դասագրքերի հարցում՝ հատկապես օտարալեզու, սակայն այդ հարցը լուծելի եմ համարում:

Ինչ վերաբերվում է առաջին հարցին, ապա կրթական բարեփոխումները իրականացվել են, սակայն մենք դրանք իրագործել ենք արտասահմանյան դրամաշնորհների միջոցով: Նախորդ տարին բավական հարուստ էր հենց կրթական բարեփոխումների իրականացման դրամաշնորհներով: Մասնավորապես կարող եմ նշել Տեմպուս Տասիսի երկու նման ծրագրեր, որոնք մենք իրականացրել ենք այլ բուհերի հետ համագործակցությամբ: Եվ այլ բուհերի հետ համագործակցությունը բավական դրական արդյունքներ է տվել:

Հարցերից հետո ԵՊՀ խորհրդի նախագահը քվերակությամբ առաջարկեց հավանություն տալ Երևանի պետական համալսարանի 2008թ. եկամուտների և ծախսերի կատարողականին և այն գնահատել բավարար:

Կողմ՝ 66, Ղեմ՝ 0, Զեռնպահ՝ 0:

### **3. ԵՊՀ 2009թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:**

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** - 2009թ.-ի նախահաշիվը, ի տարբերության նախորդ տարվա հավասարակշռված է և եթե համեմատենք վերջին տարիների հետ՝ առաջին անգամ ոչ դեֆիցիտային: Եկամուտների և ծախսերի ցուցանիշը հաջորդ տարի կազմելու է 6,6 միլիարդ դրամ: Նախահաշվի ցուցանիշները սահմանվել են նախորդ տարվա ցուցանիշների և պլանավորման համապատասխան գործընթացների հիման վրա: Նախահաշվի եկամուտները 22,9%-ով գերազանցում են նախորդ տարվա բյուջեի եկամուտային մասի ցուցանիշներին: Եկամուտային մասի աճը հիմնականուն վերաբերում է վճարովի ուսուցման ծառայության եկամուտներին՝ առավելապես հեռակա ուսուցման երկրորդ տարվա կազմակերպմանը և արտասահմանցի ուսանողների և մագիստրատուրայի ուսման վճարների ավելացմանը: Աձել է գիտական և գիտատեխնիկական գործունեության մասով ֆինանսավորման ծավալները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ ֆինանսավորման 310 միլիոն դրամը ոչ թե ԵՊՀ-ի ֆինանսավորումն է, այլ մեր միջոցով այլ ՊՈԱԿ-ների: 2009թ.-ին գիտական և

գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող աշխատակիցների աշխատավարձը կրաքրանա 6%-ով: ԵՊՀ կանոնադրությամբ թույլատրելի գործառնական եկամուտների ցուցանիշը կպահպանվի նույն մակարդակով: Ոչ գործառնական եկամուտները՝ մասնավորապես դրամաշնորհային եկամուտները, կգերազանցեն նախորդ տարվա ցուցանիշները: 2009թ.-ի նախահաշվի ծախսերը գերազանցում են նախորդ տարվա բյուջեի ծախսային մակարդակով 21%-ով: Այս աճը հիմնականում բացատրվում է աշխատանքի վարձատրության միջոցների ավելացմամբ: Միայն նշեմ, որ 2009թ.-ին մեկ դրույթի համար ԵՊՀ-ում սահմանվել է նվազագույնը 40.000 դրամ աշխատավարձ: Ելքերի հոդվածների 89%-ը կազմում են ամենամյա ծախսեր պահանջող հոդվածները, որոնք ինչպես նշեցի աշխատավարձի և դրանց հավասարեցված վճարումներն են: Ֆակուլտետներին ծախսեր են հատկացվել հետևյալ հոդվածներից՝ գրասենյակային, գործուղման, ուսանողական միջոցառումների, ծառայությունների ձեռքբերման, ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և այլ ծախսեր: Վերջում ցանկանում եմ կարևորել, որ ակնկալվող եկամուտների ավելացումները հիմնականում ուղղվելու են աշխատավարձների բարձրացմանը և աշխատողների սոցիալական խնդիրների լուծմանը:

#### *Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:*

Գրանցվեցին Գ. Ղազինյանը, Հ. Միրզոյանը, Վ. Սարգսյանը:

**Գ. Ղազինյան** - Պարոն Սիմոնյան, ֆակուլտետներին հատկացվող ծախսերի մասով նախորդ տարվա համեմատ նվազեցում է եղել: Արդյոք դա պայմանավորված է իրական վիճակին մոտեցմամբ՝ այսինքն այս տարի ինչքան ծախսել ենք, այնքան էլ հաջորդ տարի պլանավորվում է տրամադրել: Դրա հետ միասին չեն փոխվել գործուղման ծախսերը, չնայած, որ Դուք որոշակի ավելացում խոստացել եք: Նշեցիք, որ ԵՊՀ-ն խնդիր ունի միջազգային կապերը զարգացնելու, դա չի նշանակում արդյոք, որ պետք է ուշադրություն դարձնեք գործուղումային ծախսերի ավելացմանը՝ հատկապես կցանկանայի կարևորել ուսանողական գործուղումներին տրամադրվող ծախսերի հոդվածի առանձնացմանը: Մեր ֆակուլտետը անցած տարի որոշ ուսանողների գործուղեց միջազգային օլիմպիադաների և մրցույթների մասնակցելու և պարզվեց, որ այդ նպատակով գումարներ չեն առանձնացվել: Գուցե այս տարի կարելի է այդ մասին մտածել և ունենալ այդ նպատակով նախատեսվող գումարներ:

**Ա. Սիմոնյան** - Իհարկե ճիշտ նկատեցիք, որ այս տարվա բյուջեն պլանավորելիս մենք ելեւ ենք 2008թ.-ի ծախսումների իրողությունից: Մի շարք ֆակուլտետներ տարվա

ընթացքում իրենց հոդվածներից չօգտվեցին: Ավելին, Դուք գիտեք, որ եղան բազմաթիվ դիմումներ մի հոդվածի գումարները տրամադրել մեկ այլ հոդվածի ծախսերի համար, որը, բնականաբար, մենք բավարարել չենք կարող: Ինչ վերաբերվում է գործուղումային ծախսերին, ապա դրամք, ընդհանուր առնամբ, չեն ավելացվել, սակայն չեն էլ պակասեցվել: Վարչակազմին տրամադրված գործուղումային գումարների մեծ մասն անցյալ տարի ծախսվել է ֆակուլտետներից եկած դիմումների հիման վրա և այս տարի էլ մենք կշարունակենք այդ գործուղությունը: Ինչ վերաբերվում է ոչ ընթացիկ նյութական ապրանքների ձեռքբերմանը, ապա ԵՊՀ-ն բացի ֆակուլտետներին տրամադրված բաժիններից, ինքը նույնպես ընդհանուր միջոցներից այդ հոդվածով կատարում է գնումներ և դրամք նույնպես ծառայում են ֆակուլտետների կարիքների բավարարմանը: Այս նպատակով առանձնացված է 61 միլիոն դրամ, որը կծառայի ֆակուլտետներին:

**Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) -** Բայց բոլոր դեպքերում, պարոն Սիմոնյան, արդարացի չեն այն, որ ԵՊՀ բյուջեն ավելացել է մոտ 23%-ով, իսկ ֆակուլտետների համար նախատեսվող գումարները պակասել են: Բոլոր դեպքերում նախատեսք ավելացում:

**Հ. Միրզոյան -** Ես կցանկանայի հետաքրքրվել, թե նախորդ տարվա համեմատությամբ հաջորդ տարի ինչքան գումար եք նախատեսել գիտական աշխատանքով զբաղվելը խրախուսելու համար: Եվ ոչ միայն գուտ գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացման մավին է խոսքը, այլ համալսարանում գիտական մտքի աճը խրախուսելու:

**Ա. Սիմոնյան -** Այդ առումով կցանկանայի անդրադառնալ երկու հիմնական գաղափարի: Առաջինը մեր երկու հիմնական պարբերականներում հրատարակվող հոդվածների համար հոնորարների վճարումն է, որոնք կտնօրինեն պարբերականների խմբագրությունները: Խոստանում եմ, որ մենք այդ հոնորարների բաշխման համար կատեղծենք խմբագրություններին կից համապատասխան հանձնաժողով, այլև կվերահսկենք նաև գիտական խորհրդի կողմից: Ինչ վերաբերվում է նաև այլ վճարումներին, ապա մենք ունենք հնարավորություն, ձիշտ է շատ փոքր, բայց հնարավորություն հոնորարներ վճարել այն համալսարանականներին, ովքեր իրենց գրքերը կտպագրեն ԵՊՀ հրատարակչության միջոցով: Մեր հիմնական խնդիրներից մեկը այս ոլորտում երիտասարդ գիտաշխատողների խրախուսման խնդիրն է: Կփորձենք հաջորդ տարի գտնել այս խնդրի լուծման գործնական ձանապարհները:

**Վ. Սարգսյան** - Ես անդրադարձ կատարեմ օրակարգի նպաստորդ հարցից ծագող մի կարևոր իրավական խնդրի: Քանի-որ մենք հաստատեցինք հունվար-նոյեմբեր տասնմեկամյակի կատարողականը, ապա այնպես է ստացվում, որ մենք ամեն տարի բաց ենք թողնելու մեկ ամիս: Փաստորեն մենք կամ պետք է հաստատենք կատարողականը նոյեմբերից նոյեմբեր կամ էլ Դուք պետք է հետո հավելյալ դեկտեմբերի կատարողականը ներկայացնեք:

**Ա. Սիմոնյան** - Ծնորհակալույսուն հարցի համար: Մենք առանձին տպագրել ենք 2007թ.-ի ամբողջ կատարողականը, որոնք ընդհանուր փաթեթի հետ չենք ուղարկել, սակայն այստեղ դահլիճում առկա է: Իմ ներկայացրած վերջին համեմատական պայմաներում արդեն իսկ ներկայացվում էին նախորդ տարվա տասներկու ամիսների տվյալները: Մենք, երբ որ ունենանք դեկտեմբեր ամսվա տվյալները, ապա կարող ենք հարցման կարգով հաստատել նաև այդ ամսվա կատարողականը:

**Վ. Սարգսյան** - Եվս երկու հարց 2009թ.-ի բյուջեի վերաբերյալ: Առաջինը, Դուք բյուջեի 13-րդ կետով Վարձակալության ծախսեր եք նախատեսել 9,6 միլիոն դրամի չափով լսարանների վարձակալության համար: Կցանկանայի ձշտել, թե որտե՞ղ ենք մենք լսարաններ վարձակալում և ինչի՞ համար, արդյո՞ք մեր լսարանները չեն բավարարում: Եվ երկրորդը 22-րդ տողով գիտական և գիտատեխնիկական ծախսերի համար պետական բյուջեից ավելացումը եղել է երեք անգամ, իսկ Դուք նշեցիք, որ աշխատավարձի բարձրացումը նախատեսված է 6%-ով: Կցանկանայի իմանալ, թե ուր են ուղղվելու այդ միջոցները:

**Ա. Սիմոնյան** - Ես արդեն նշեցի այդ մասին, որ մենք չենք տնօրինում այդ գումարները: ԵՊՀ-ն միայն խողովակ է այդ միջոցները ուղղորդելու լիազոր մարմնից դեպի այլ ՊՈԱԿ-ներ գիտական գործունեություն իրականացնելու համար: Ինչ վերաբերվում է լսարանների վարձակալությանը, խոսքը գնում է իրանագիտության բնագավառում իրանի քաղաքացի մագիստրոսների պատրաստմանը և ասպիրանտական ուսուցմանը, որոնք իրենց դասերը անց են կացնում Արիա հայ-իրանական համալսարանուն և այդ համալսարանի հետ մենք ունենք համագործակցության պայմանագիր, որը կնքել ենք սեպտեմբեր ամսին և ստացված գումարների մի մասը մենք տալիս ենք որպես լսարանների վարձավճար:

*Հարցերից հետո ԵՊՀ խորհուրդը քվեար կության միջոցով որոշեց.*

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2009թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջե)՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ԵՊՀ ռեկտորին 2009թ. ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Կողմ`66, Դեմ` 0, Զեռնպահ`0:

**4. ԵՊՀ 2009/2010-2013/2014 ուստարիների գարգացման ռազմավարական ծրագրի հիմնադրույթների հաստատում:**

**Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան**

**Ա. Սիմոնյան** - 2007թ.-ից Երևանի պետական համալսարանում մեկնարկել է ռազմավարական պլանավորման գործընթացը, որի հիմնական նպատակն է 2009/2010-2013/2014 ուստարիների գարգացման ռազմավարական ծրագրի մշակումն ու ռազմավարական պլանավորման անընդհատ գործընթացի իրագործումն է: Այն հետագայում ենթադրում է ֆակուլտետների և համալսարանի մյուս ակադեմիական միավորների ռազմավարական ծրագրերի ստեղծում՝ որպես ընդհանուր ռազմավարական ծրագրի օրգանական շարունակություն: Այդ ամենը միասին ԵՊՀ-ին թույլ կտա ռազմավարական պլանավորումից անցնել համալսարանի և նրա կառուցվածքային միավորների օպերատիվ պլանավորման գործընթացին: Սա համալսարանի համապարփակ ռազմավարական պլանավորման առաջին լուրջ փորձն է, թեև պետք է նշել, որ նախկինում մենք ևս ունեցել ենք այդպիսի ծրագրեր: Մշակվող ծրագիրը նպատակ ունի մի կողմից ամրապնդել գարգացման արդեն ձևավորված միտումները համալսարանի գործումների բոլոր հիմնական բնագավառներում, մյուս կողմից համապատասխանեցնել նրա գարգացման հետագա ընթացքը միջավայրի նոր իրողություններին և միտումներին: Ռազմավարական ծրագրի ձեզ ներկայացված հիմնադրույթները մշակել է ԵՊՀ ռազմավարական պլանավորման անկախ խումբը արտաքին և ներքին միջավայրի գործուների հնարավոր ազդեցության ուսումնասիրման հիման վրա: Պլանավորման մեր կողմից ընտրված մեթոդաբանության համաձայն նրա անմիջական մշակմանը նախորդել են համալսարանի գործումների արդյունավետության ուսումնասիրումը ըստ բնագավառների, մոտ 120 գործուների հաշվառմամբ և նրանց վերլուծության միջոցով: Ուժեղ և թույլ կողմերի, արտաքին վտանգների և հնարավորությունների բացահայտումն ու վերլուծությունը մեզ հնարավորություն է ընձեռել համարժեքորեն գնահատելու միջավայրային փոփոխությունների ազդեցությունը համալսարանի գործումների տարբեր

ասպեկտների վրա: Չեզ ներկայացված ռազմավարական ծրագրի հիմնադրույթներում ձևակերպված են համալսարանի տեսլականը՝ այսինքն նրա ցանկալի ապագան, առաքելությունը՝ այն ինչի համար գոյություն ունի ԵՊՀ-ն և որը նրան տարբերում է նմանատիպ այլ հաստատություններից, հիմնարար արժեքները, որոնք ընկած են համալսարանի ողջ գործունեության հիմքում: Համալսարանի առաքելությունն արդյունավետ կերպով իրականացնելու, տեսլականին առավելագույնս մոտեցնելու համար սահմանվել են համալսարանի գործունեության առանցքային ոլորտները կազմող երեք ռազմավարական նպատակները՝ բարձրորակ կրթություն, առաջնակարգ հետազոտություններ և նորարարություն, հանրային ներգրավում և ծառայություններ: Աջակցող երեք նպատակները ներկայացնում են այն ինչ անհրաժեշտ է համալսարանին ռազմավարական նպատակները հաջողությամբ իրագործելու համար: Դրանք են՝ որակյալ կադրային ներուժ, որակյալ ենթակառուցվածքներ և որակյալ ծառայություններ: Իսկ ընթացիկ երեք գերակայությունները՝ բազմազանեցված մուտքի համապատասխանություն, ֆինանսական կայունություն և արդյունավետ կառավարում, ռազմավարական գործակցություն և միջազգայնացում, ուղղորդում են ռազմավարական նպատակներին հասնելու մեր մոտեցումները: Յուրաքանչյուր նպատակին հասնելու համար առաջադրվել են դրա իրականացման համար անհրաժեշտ խնդիրները: Իսկ վերջիններիս լուծման գործողությունները՝ քաղաքականություն, ծրագրեր, նախագծեր, որոշումներ, ռեսուրսային հատկացումներ և այլն դեռևս գտնվում են մշակման փուլում: Ռազմավարական ծրագիրը ներառելու է նաև յուրաքանչյուր նպատակին հասնելու արդյունավետության գնահատման հստակ և չափելի ցուցանիշներ, պահանջման փուլում: Ռազմավարական ծրագիրը ներառելու է նաև յուրաքանչյուր նպատակին հասնելու արդյունավետության գնահատման հստակ և չափելի ցուցանիշներ, պահանջման փուլում: Վազականացնելու համար անհրաժեշտ է նոր նախագծեր և նոր համարակալ համարական գործողություններ: Վերջիններս կարող են ծնել նոր հնարավորություններ, որոնց պետք է արձագանքն կամ նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ, որոնց համալսարանը ստիպված կլինի դիմագրավել: Մեզ համար ռազմավարական պահանջման գործողությունների մեջ պարբերական մոնիթորինգի, վերլուծության և բարելավման շարունակական գործընթաց, որը պետք է ընդգրկի համալսարանի բոլոր հիմնական կառույցներն ու գործունեության ոլորտները: Ծրագրի իրականացման հաջողությունը մեծապես կախված է լինելու նրանից, թե որքանով են նրանք լինելու ընկալելի և հասկանալի համալսարանական լայն հանրության կողմից և որքանով է պատրաստակամ այդ հանրությունը դրանք միասնական իրականություն դարձնելու գործում: Նախատեսվում է ռազմավարական ծրագրի հիմնադրույթներն ուղարկել ֆակուլտետներին և հիմնական գործընկեր

կազմակերպություններին քննարկման համար: Քննարկումների արդյունքում ռազմավարական ծրագրի ձևավորված նախագիծը կներկայացվի նախ ԵՊՀ գիտական խորհրդի քննարկմանը և, հավանություն ստանալու դեպքում մինչև ԵՊՀ 2008-2009 ուսումնական տարվա ավարտը ԵՊՀ խորհրդի դատին: Ցանկանում եմ վերջում նշել, որ այդ ռազմավարական ծրագրի հիմնական ելքային նպատակը առաջիկա տասնինգ-քսան տարվա ընթացքում Երևանի պետական համալսարանը գլոբալ հետազոտական համալսարան վերածելու է:

*Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:*

Գրանցվեցին Ա. Մելքոնյանը, Ս. Հարությունյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Բաղդասարյանը:

**Ա. Մելքոնյան** - Բոլոնյան համակարգի ներդրման պայմաններում այս ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակ հաշվի առնվել է այն դրականը, որ մենք ունեինք նախորդ համակարգում:

**Ա. Սիմոնյան** - Իհարկե մենք դա հաշվի ենք առել և կարծում եմ հայաստանյան մյուս բուհերը, ինչպես նաև Կրթության և գիտության նախարարությունը շատ լավ գիտակցում են այս խնդրի կարևորությունը: Պետք է ասեմ, որ ի պատիվ մեր բարձրագույն կրթության համակարգի մենք Բոլոնյան գործընթացները տեղայնացնում և կիրառում ենք շատ ձկում և զգուշությամբ: Պետք է ասեմ, որ Բոլոնիայի պահանջները իմպերատիվ բնույթ չեն կրում և բոլորովին էլ դրանց մեջ մասը չի հակասում մեր բարձրագույն կրթության արժեքներին: Իհարկե կան վիճելի հարցեր և միարժեքորեն չընդունվող խնդիրներ, սակայն կիրառական խնդիրների լուծմանն անցնելը, բոլորովին էլ չի նշանակում, որ մեր կրթության և հետազոտությունների հիմնարարությունը պետք է կորի:

**Ս. Հարությունյան** - Դուք ասացիք, որ առաջիկա տասնինգ-քսան տարում համալսարանը ձգուում է դառնալ հետազոտական համալսարան: Մոտակա երկու երեք տարիների ընթացքում ինչպիսի՝ կոնկրետ քայլեր եք պլանավորում և ինչպես եք պատրաստում զարգացնել հարաբերությունները հետազոտական այլ կազմակերպությունների հետ:

**Ա. Սիմոնյան** - Արդեն իսկ ասելով, որ քսան տարի հետո ցանկանում ենք դառնալ գլոբալ հետազոտական համալսարան, մենք լուրջ հայտ ենք ներկայացնում: Կարծում

Եմ մենք այդ հնարավորություններն ունենք: Իմ կարծիքով առաջիկա տարիներին մեր հիմնական խնդիրն է լինելու առավել սերտ համագործակցությունն ակադեմիական ինստիտուտների հետ, երբ գործում է ամբիոն-հետազոտական լաբորատորիա - ինստիտուտ կապը: Հետազոտական լաբորատորիան կարող է լինել և բուհում, և ինստիտուտում: Ինստիտուտում կարող են լինել նաև ամբիոններ, այնտեղ կը նթանան կոթական և հետազոտական համապատասխան գործընթացները: Մենք առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում կկարողանանք որոշակի դրական տեղաշարժեր արձանագրենք: Տեխնոպարկի ստեղծումը հետազոտական համալսարանի կայացման հաջորդ կարևոր խնդիրներից մեկն է: Այս հարցում մենք պատրաստ ենք գնալ համագործակցային, հավելյալ տարածքների վարձակալության կամ ձեռքբերման ձանապարհով: Երրորդ խնդիրը գիտական հետազոտությունների առևտրայնացման խնդիրն է, որում առաջիկա մի քանի տարիների ընթացքում մենք կունենանք զգայի տեղաշարժեր: Այսօր մենք ունենք նման օրինակներ, սակայն դրանք քիչ են: Առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում մենք հիմքեր պետք է ստեղծենք նշված երեք խնդիրների լուծման համար:

**Ա. Ավետիսյան** - Չեր հաշվարկներով մենք մոտավորապես երբ կունենանք զարգացման ծրագիրը:

**Ա. Սիմոնյան** - Ծրագիրը մենք կունենանք հունիսի վերջին: Կարծում եմ մինչ այդ մենք ունենք բոլոր հիմքերը մարտին այն դնելու շրջանառության մեջ: Ապրիլին արդեն իսկ գիտական խորհրդում պլանավորել ենք փաստաթղթի քննարկումը, որից հետո այն կուղարկենք խորհրդի անդամների քննարկմանը և հունիսին կարծում եմ, խորհրդի նախագահի համաձայնությամբ, կկարողանանք հրավիրել նիստ և քննարկել ու հաստատել փաստաթուղթը:

**Գ. Բաղդասարյան** - Սահմանված է արդյոք համալսարանական կրթության ազգային մոդելը և ո՞րն է այն:

**Ա. Սիմոնյան** - Իհարկե սահմանված է և կա պաշտոնական փաստաթղթերում: Եթե կարձ ասելու լինենք այն Բոլոնյան գործընթացների և ազգային արժեքների վրա հիմնված կրթության մոդելն է: Ըստ էության, այն բովանդակությամբ համամարդկային արժեքների վրա հենված, սակայն ձևով ազգային կրթությունն է: Սա միայն իմ կարծիքը չի, այլև նշված է պետության կողմից հաստատված փաստաթղթերում:

**Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) -** Հարցեր այլևս չկան և կարող ենք անցնել ելույթներին, միայն խնդրում եմ բոլորին թողնել թերահավատ մոտեցումները, քանի որ չեն կարծում, որ երեսուն տարին այնքան կարձ ժամանակահատված է, որ մենք չկարողանաք էական բարեփոխումներ ապահովենք: Երեսուն տարին մի այնպիսի ժամանակահատված է, երբ, այո՛, բազմաթիվ փոփոխություններ են կատարվելու ոչ միայն Երևանի պետական համալսարանում, այլև կրթության և գիտության բոլոր ոլորտներում: Երբ որ մեր պետությունը կարողանա իր տեղը գտնել, սրանից անխուսափելիորեն կրխի համալսարանի զարգացումն ու կայացումը: Մենք պետք է հավատանք այն գործին, որով մենք զբաղվում ենք, այլապես ինչպես կարելի է մյուսներին համոզել, եթե դու ինքո՞ չես հավատում քո գործի հաջողությանը: Խնդրեմ, կարող եք գրանցվել ելույթների համար:

Գրանցվեցին Հ. Սարգսյանը, Հ. Միրզոյանը, Ռ. Մարտիրոսյանը, Ս. Հարությունյանը, Ա. Ավետիսյանը, Լ. Շելյանը:

**Հ. Սարգսյան -** Մեծարգո պարոն Նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, մենք այս դահլիճում բազմաթիվ առիթներ ունեցել ենք խոսել համալսարանի հատուկ կարգավիճակի մասին: Նախ ես կուգենայի անդրադառնալ այդ հատուկ կարգավիճակի մեկ բովանդակային կողմին: Դա հենց ռազմավարության մշակման խնդիրն է: Ես կարծում եմ, որ մշակվող ռազմավարական ծրագիրը պետք է համահունչ լինի համապետական շատ դրույթների հետ, որը սակայն այս փաստաթղթում բացակայում է: Կցանկանայի խուսափել կոշտ սահմանումներից, սակայն այն անդեմ է: Ինչ ես կցանկանայի տեսնել այդ հիմնադրույթներում: Կցանկանայի, որ բացի վերջնական ցանկալի արդյունքից մենք փաստաթղթում տեսնեինք նրան հասնելու ձանապարհը: Իսկ այդ ձանապարհը բավականին լուծումներ կպահանջի հենց հայեցակարգային հիմնադրույթների մակարդակում: Այստեղ հարց բարձրացվեց, որ երբ կունենանք ծրագիրը, ապա առաջարկություններ կներկայացվեն ֆակուլտետների կողմից, սակայն ես կարծում եմ, որ առաջարկությունները պետք է նախ և առաջ վերաբերվեն հիմնադրույթներին: Քանի մենք չունենք բազում քննարկումներ անցած հիմնադրույթներ, նրա հիման վրա դժվար է կառուցել լավ ծրագիր: Համալսարանական որակյալ կրթական ծառայությունների մատուցումը պահանջում է երկարաժամկետ ռազմավարական ծրագրի մշակում, որի հիմնադրույթները պետք է պարունակեն այնպիսի հարցերի արձարծում, ինչպիսիք են մասնագիտացումների, մագիստրոսական ծրագրերի հնարավոր զարգացումը՝ լինի դա բնագիտական, թե հումանիտար թևերում: Ես չեմ ծավալվի հիմնադրույթների շուրջ, այլ միայն նշեմ, որ շատ լուրջ խնդիր է,

օրինակ, համալսարանի ուսանողների թվաքանակը բակալավրիատում և մագիստրատուրայում: Եթե հենց այս հիմնադրույթները քննարկվեին ֆակուլտետներում և ներկայացվեին առաջարկություններ, ապա, գտնում եմ, որ մենք կունենայինք ոչ թե միջնաժամկետ, այլ գուցե և երկարաժամկետ ռազմավարական ծրագիր:

**Հ. Միրզյան - Մեծարգո պարոն Նախազահ, խորհրդի հարգելի անդամներ, Ես խսկապես կարծում եմ, որ որ մեր ընդունած ծրագրերին պետք է հավատալ և իմ ելույթը ընդունեք որպես այդ հավատի դրակորման ձև: Խսկապես ողջունում եմ այդ հեռանկարային պլանը և Ես ինքս էլ հավատալով դրան ուզում եմ ավելի իրական տեսնել այդ ծրագրը: Եթե ապագայում մենք ցանկանում ենք ունենալ գլոբալ գիտական հետազոտական համալսարան, ապա այսօրվանից պետք է մտածենք գիտական աշխատանքը, գիտնականին խրախուսելու մասին: Ես նոր չեմ բարձրացնում այս հարցը և գիտեմ, որ եթե ցանկանում ես լուծել մի հարց, պետք է անընդհատ խոսես այդ մասին: Գիտությունը, ինչպես և սպորտն ու արվեստը շատ է սիրում իր հանդեպ խնամք և հոգատարություն: Մեծարգո նախազահ Դուք դրանում համոզվեցիք շախմատի հանդեպ ամենօրյա հոգատարություն, ուշադրություն ցուցաբերելով: Շատ կցանկանայի, որ եթե ոչ այդ չափով, գոնե այդ ձևով գիտությունը լինի Ձեր ուշադրության կենտրոնում: Եվ հարցը միայն ֆինանսական միջոցների քանակում չէ, այլև ցուցաբերվող վերաբերմունքի, հոգատարության մեջ: Կարելի է այսօր արդեն խսկ մտածել այդ մասին ապագայում արդյունքներ ստանալու համար: Օրինակ, կցանկանայի, որ գիտական կոչումների և աստիճանների միջև ժամանակին շատ արհեստականորեն դրված տարբերությունները, նորից քննարկվեն և ասիստենտի ու դոցենտի, դոցենտի ու պրոֆեսորի դրույքների միջև չնչին դարձած տարբերությունները ոչ դրական վերաբերմունք են գիտության և գիտնականին խրախուսելու գործում: Ես չեն խոսում իմ սերնդի մասին, այլ ապագայի համար: Ես բոլորովին այն կարծիքին չեմ, որ գիտությանը միայն դոկտորներն են զբաղվում, բայց փաստ է, որ ամեն տեղ խրախուսանքի մեխանիզմը գործում է: Եվ մեր ֆակուլտետում և ողջ համալսարանում նվազում է գիտական կոչումների, գիտական աստիճանակարգման կարևորությունը: Ինքներդ համեմատելով այս և նախորդ տարվա ցուցանիշները կարող եք համոզվել, որ գիտական պոտենցիալի նվազում է տեղի ունենում: Ասում ենք, որ համալսարանը եղել է առաջին բուհը, ապա դա նախ և առաջ եղել է իր ունեցած գիտական ներուժի հաշվին: Խսկ հիմա, հարգարժան Նախազահ, լինելով «Բանբեր համալսարանի» հանդեսի խմբագիրը, տեսնում եմ իրական վիճակը: Խնդրում, համոզում եմ, որ հոդվածներ գրեն, սակայն նույնիսկ այդ պարագայում խրախուսել չենք կարողանում: Այժմ գիտության**

առումով մենք այնպիսի վիճակում ենք, որ կազք ընդհատվելու դեպքում ապագայուն շատ դժվար կլինի: Այս առումով ձեր բոլորի ուշադրությունն եմ հրավիրում նրա վրա, որ գիտական միտքը դաշնա հատուկ, ամենօրյա ուշադրության առարկա: Շնորհակալություն:

**Ո. Մարտիրոսյան** - Ես ցանկանում եմ նախ և առաջ նշել, որ պետք է հավանություն տալ ռեկտորատի գործունեությանը մյուս կողմից էլ ցանկանում եմ ասել, որ նախորդ տասնինգ տարիների ընթացքում երազում էի ունենալ բյուջեի վերաբերյալ նման մանրամասն մշակված փաստաթուղթը: Ինչ վերաբերվում է ԵՊՀ ռազմավարության հիմնադրույթների փաստաթղթին, իհարկե այն նվիրված է համալսարանի զարգացմանը: Կարծում եմ, որ նրա գլխավոր խնդիրը պետք է լինի որակի ապահովումը: Համալսարանի զարգացման հիմնական խնդիրը պետք է միտված լինի որակյալ մասնագետի պատրաստմանը: Հիմա արդյոք մեր ներկայիս կրթական համակարգը իր բովանդակային և ծևական առումով կարող է նպաստել որակի բարձրացմանը: Նախ ասեմ, որ այս համալիրը նախատեսված էր սովետական կրթական համակարգի համար, որն առանձնապես չէր պարունակում գիտական բաղադրիչ: Այնտեղ ուշադրությունը կենտրոնացվում էր ուսումնական խնդիրների վրա, որը և առավելություն էր և թերություն: Խոսելով Բոլոնիայի սկզբունքների մասին, նշում ենք, որ այնտեղ գլխավոր խնդիրը գիտելիքների օգտագործման հմտությունների տրամադրումն է: Դա հիմնականում կատարվում է ինքնուրույն և արտաժամյա պարապմունքների ձևով՝ լսարանային ժամերի կրծատմամբ: Դասաժամերի մեծ մասն անցնում է լաբորատորիաներում, ընթերցասրահներում և այլն, իսկ ուսանողն անընդհատ կոնտակտի մեջ է դասախոսների հետ: Ցավոք սրտի, մեր համալսարանն այսօր չունի այդ հնարավորությունները: Կրեդիտային համակարգի ներմուծմամբ՝ մենք ինքներս իշեցրինք այդ մակարդակը, քանի որ այս պայմաններով համալսարանը չի կարող որակյալ կրթություն ապահովել 13-15 հազար ուսանողների համար: Մենք չունենք համապատասխան կադրային ներուժ, ենթակառուցվածքներ և այլն: Այս պարագայում ո՞րն է արմատական լուծումը՝ ուսանողների թվի էապես կրծատումը: Այս գործընթացը պահանջում է տարիներ: Ռեկտորը նշեց, որ առաջիկա տարիներին կարելի է օգտագործել << ԳԱԱ ներուժը: Բոլոնյան գործընթացի համաձայն մագիստրոսական կրթությունը պետք է պարունակի լուրջ գիտական բաղադրիչ: Այստեղ առաջարկություն հնչեց վերանայել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թվի համահարաբերակցությունը: Մագիստրոսների թիվը կարող է ավելացնել միայն լուրջ հետազոտական համալսարանը, որից մենք դեռ շատ հեռու ենք: Կարծում եմ, որ պետք է ավելացնել համալսարանի նկատմամբ պետական

հոգածությունը և ինչքան պետական բյուջեից մուտքերը աստիճանաբար կկարողանանք ավելացնել, զուգահեռաբար կկարողանանք նվազեցնել ուսանողների թիվը: Մի ձանապարհը այս է, մյուսը արդեն եղած հետազոտական ինստիտուտների հետ կապի ամրապնումն է: Երկրորդ ուղղության գործընթացները մենք կարող ենք ավելի արագ կատարել: Եվ այս առումով որոշ այլ համալսարաններ ավելի առաջ են անցել: Ես ցանկանում եմ նշել, որ մեր պետությունը, այո, պետք է ունենա մեկ էլիտար բուհ և դրա համար պետք է միջոցներ չխնայի, և այդ դեպքում բարձրագույն կրթության համակարգի մյուս օղակները կունենան չափանիշ, թե ինչի պետք է ձգտեն:

**Ս. Հարությունյան -** Հարգարժան պարոն Նախագահ, հարգելի գործընկերներ, ես նկատում եմ, որ վերջապես փոխադարձ համաձայնեցված մոտեցումներ են ձևավորվում մեր պետական բուհերի՝ մասնավորապես համալսարանի և ակադեմիայի միջև: Իրոք, մեր պետությանն անհրաժեշտ է հետազոտական համալսարան: Ես, ուսումնասիրելով արտասահմանյան երկրների փորձը կարող եմ ասել, որ առավել դա հաջողել են Շվեյչայում և Խորայելում: Կարծում եմ Հայաստանն այդ հարցում կադրերի պակաս ունի: Մի երկու խոսք նաև համալսարանի մակերեսների մասին, որն էական խոչընդոտ է հետազոտական համալսարան դառնալու համար: Այստեղ ևս պետք է լուծումներ փնտրել և օգտագործել այլ հետազոտական ինստիտուտների տարածքները: Խոսք գնաց նաև տեխնոպարկի մասին. դա ևս արդյունավետ քայլ կլինի, որը, սակայն, համալսարանն ինքնուրույն չի կարող անել այդ խնդիրը լուծելու համար և պետք է ստեղծել համալսարանական կոնսորցիոն: Միացյալ ուժերով, իհարկե, այս խնդիրն առավել հեշտ կլուծվի: Ճիշտ է, պետական աջակցությունը պետք է շատացնել, սակայն մենք չենք օգտվում գիտելիքի առևտրայնացման հնարավորություններից: Մենք ռեգիոնում որոշ մասնագիտությունների գծով բավականին գրավիչ երկիր ենք և համապատասխան ճիշտ կազմակերպվածության դեպքում մենք կկարողանանք արտերկրի ուսանողներ ներգրավել: Կարծում եմ այս մասը վատ ենք օգտագործում և կարելի է այդ մասին մտածել: Կարծում եմ, որ հետազոտական համալսարանում ոչ բոլոր ֆակուլտետները պետք է ներգրավվեն և ոչ բոլոր ֆակուլտետները կարող են ունենալ մագիստրոսական ուսուցում, շեշտադրումն այստեղ կարելի է դնել բնագիտական ֆակուլտետների վրա: Եվ նաև, պարոն Նախագահ, կարծում եմ պետք է մտածել մակերեսների մասին, քանի որ այս 2,5 հեկտարի վրա համալսարանը չի կարող զարգանալ:

**Ա. Ավետիսյան -** Շնորհակալություն մեծարգո Նախագահ, հարգելի անդամներ կցանկանայի երկու խոսքով անդրադառնալ ռազմավարական ծրագրին:

Ներկայացված դրույթները, այս, ընդհանրական են և դա հասկանալի է, քանի որ փորձ է արվել արտացոլել այն միջազգային նորմերը, որոնք բնութագրում են այն համալսարանը, որին մենք ձգտում ենք: Իմ հարցը ուղղված էր նրան, թե երբ կունենանք կրնկրետ ծրագիրը, որպեսզի կարողանանք հստակ քննարկել և <<բարձրագույն կրթության և Երևանի պետական համալսարանի զարգացման դրույթները: Այդ առումով առաջարկում եմ իմ գործընկերներին հավանություն տալ այս ծրագրին: Կցանկանայի ասել, որ այստեղ ընդհանրական լինելու պատճառով չի արտացոլվում երկու փաստ: Նախ համալսարանի երկարաժամկետ զարգացման ծրագիրը չի կարող դուրս մնալ <<բարձրագույն կրթության համակարգից, այսինքն միջբուհական համագործակցությունն ապահովելու համար պետք է ընդգրկվեն համապատասխան դրույթներ և ծրագրի մշակման ժամանակ մասնակցեն տնտեսագետներ, ովքեր տիրապետում են պետության զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերին և երկրորդ, անպայման յուրաքանչյուր ֆակուլտետ պետք է ունենա իր մասնագիտությունների հեռանկարային զարգացման համապատասխան ռազմավարական ծրագիր: Այս պարագայում կպահպանվի և ներհամալսարանական զարգացման ամբողջականությունը և ամբողջ բարձրագույն մասնագիտական կրթության դաշտում կապահովվի համալսարանի տեղն ու դերը: Շնորհակալություն:

**I. Ծեկյան - Ռազմավարական ծրագրի իրականացման գործում մեծ դեր ունի համալսարանի կողմից ստեղծված մինչհամալսարանական կրթության կենտրոնը և այդ գործում շատ համալսարանականներ արդեն իրենց ներդրումն ունեցել են: Շատերն այդ գործն անում են առանց խրախուսման, իհարկե, համաձայն եմ պարուն Միրզոյանի հետ, որ նրանց խրախուսման ձևեր պետք է մշակել: Եթե մենք ուզում ենք ունենալ լավ կադրեր համալսարանում, ապա պետք է սկսենք դպրոցից:**

**Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) - Պարուն Ծեկյան, ես պրոֆեսոր չեմ, սակայն խորը համոզմունք ունեմ, որ պրոֆեսորի խրախուսման լավագույն ձևը այն է, որ նրան չհավասարեցնեն գիտությունների թեկնածուին, ասպիրանտին և այլն: Մեր երկրում հիմա այնքան պրոֆեսոր կա, որ եթե սկսենք խրախուսել, ապա շատ դժվար վիճակուն կհայտնվենք: Դուք պետք է սկսեք այս մասին մտածել և դա կառավարության կամ Ազգային ժողովի խնդիրը չէ: Դուք՝ գիտնականներդ, ունեք կոչումներ շնորհող և հաստատող համապատասխան կառույցներ, և եթե Դուք Զեր տանը կարգուկանոն կհաստատեք, մենք էլ կսկսենք խրախուսել:**

**Ա. Սիմոնյան** - Ես կցանկանայի անդրադառնալ Հ. Սարգսյանի այն դիտարկմանը, որ եթե մենք ռազմավարության հիմնադրույթներից հանենք ԵՊՀ բառը, ապա այն չի տարբերվի այլ համալսարանների ռազմավարություններից, դա նշանակում է, որ մենք հասել ենք մեր նպատակին, այն է՝ ստեղծել համաշխարհային մասշտաբով հետազոտական համալսարանի տեսլական: Այո, այս հիմնադրույթները չենք կարող լինել միայն համալսարանի համար, որանք հանդիսանուր են: Հաճածայն եմ նաև, որ մեր ուսանողների թիվը շատ է, սակայն դա լավ օրից չէ: Եթե մեր համալսարանի աշխատողների բարեկեցությունը դրանից կախված չլիներ, մենք կվրձատեինք մեր ուսանողների թիվն ուղղի կեսով: Այդ ուսանողների մեծագույն մասը ապահովում են համալսարանի գոյությունը: Ցանկանում եմ նշել, որ նախկին նախագծով համալսարանին պետք է հատկացվեր ութը հեկտար տարածք, սակայն դա չիրականացվեց: Կարծում եմ առաջին ուղղությունը նշվեց. դա ակադեմիական ինստիտուտների հետ համագործակցությունն է և երկրորդ՝ կարելի է մտածել Երևան քաղաքից դուրս ինչ-ինչ տարածքներ տրամադրելու մասին: Հաջորդ խնդիրը դա դպրոցներում և մինչքուիական ոլորտում մեր համալսարանականների աշխատանքի մասին է: Պարուն Շեկյան, արտասահմանում ոչ մի համալսարանական պրոֆեսոր չի զլանում աշխատել իր ապագա դիմորդների հետ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով և դա արվում է հասարակական հիմունքներով: Իսկ մեզ մոտ դա կարծես մոռացվել է: Մյուս բոլոր առաջարկների և դիտողությությունների համար շնորհակալ եմ և մենք կփորձենք մեր գործունեությունում դրանք հաշվի առնել:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Կարծում եմ հիմնադրույթները պետք է հաստատել, սակայն ծրագրի համար, իսկապես, լայն քննարկումներ են անհրաժեշտ: Ակնհայտորեն այդ ծրագրու պետք է բխի մեր Կառավարության, Հայաստանի Հանրապետության զարգացման ծրագրերից և այլ կերպ լինել չի կարող: Մենք ունենք երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, որը նախկինում անվանում էինք Աղքատության հաղթահարման, իսկ ներկայում Կայուն զարգացման ծրագիր, ունենք նաև միջնաժամկետ ծրագրեր, որտեղ հստակորեն որոշված է, թե ինչքան միջոցներ են հատկացվում կրթությանը, որքա՞ն՝ բարձրագույն կրթությանը, թե ինչ չափանիշներով է գնահատվում որակյալ կրթությունը և թե ինչ չափորոշիչներ պետք է կիրառել: Կտրված ինքնուրույն ծրագիր ունենալ միգուցե բովանդակային, մասնագիտական առումով անհրաժեշտություն է, սակայն այդ ծրագիրը չի կարող դուրս մնալ ՀՀ կրթական համակարգից: Համալսարանն ինձ համար էլ շատ հարազատ մի հաստատություն է, բայց եթե բոլորս չգիտակցենք, որ Երևանի պետական համալսարանը այդպիսին է դարձել Երախտավորների աշխատանքի շնորհիվ, մենք չենք կարող ունենալ ապագա:

Պետությունն այսօր չի կարող խնամակալոթյամբ զբաղվել և վերցնել մի գիտական հաստատություն, սաեւ այն, տալ բարձր աշխատավարձ և դարձնել ընտրյալ բուի: Այդ ուղղությամբ պետք է նաև դուք աշխատեք: Ես կարող եմ ձեզ բազում օրինակներ բերել, որ երկրի առաջին բուից եղել է ոչ թե պետական համալսարանը, այլ այն համալսարանը, որը հաջողությունների է հասել: Բոլորին ես ուզում եմ տրամադրել այսպիսի աշխատանքի: Իհարկե կարեկի է հավաքել շատ ուսանողներ, իհարկե կարեկի է վարձը բարձրացնել, բայց միայն դրա հետևից ընկնելով մենք չենք կարողանալու լավ մասնագետներ պատրաստել: Որ պետությունը պետք է իր աջակցությունն ավելացնի և արդեն իսկ ավելացնում է, դա կարող ենք նկատել նաև այս տարվա պետական ֆինանսավորման չափերը դիտարկելով: Փաստորեն ԵՊՀ բյուջեն ավելացել է 20%-ով, որի 10%-ը տրամադրել է պետական բյուջեն: Գնալով այս աջակցության չափն ավելանալու է, բայց եթե մենք հասարակությանը չկարողանանք տալ այն որակի մասնագետ, որի պահանջը կա, ապա ոչ հասարակությունը և ոչ էլ պետությունը չի կարողանալու վճարել այնքան, որքան բոլորս ցանկանում ենք: Մրցակցությանը պետք է մասնակցել, մրցակցությանը պետք է դիմանալ, մրցակցության մեջ պետք է հաղթել: Ես այսօր առավոտյան կառավարության նիստում ասացի, որ բացառիկ հնարավորություն է ստեղծվել, և մենք մի քանի երկրներով կկարողանանք ստեղծել մի բացառիկ հիմնադրամ, որը պետք է սատարի ժամանակակից տեխնոլոգիաների զարգացմանը: Այդ գիտական կենտրոնի հնարավորություններից բոլորը կարող են օգտվել, և եկենք կարողանանք բոլորս ապացուցել, որ Հայաստանում գիտություն կա, որ այն կարող է կիրառվել և արդիական օգուտներ բերել տնտեսությանը: Հնարավորությունները մեծ են և դրանից պետք է օգտվել: Կարծում եմ, որ մենք առավել մեծ օգուտ տված կլինենք, եթե ակտիվորեն մասնակցենք այս ծրագրի քննարկմանն ու ստեղծմանը: Ես առաջարկում եմ այս հիմնադրույթները վերցնենք որպես հիմք, կազմենք ծրագիր և առաջ շարժվենք: Ես առաջարկում եմ քվեարկել չորրորդ նախագծի օգտին:

ԵՊՀ խորհուրդը քվերակության միջոցով որոշեց հաստատել Երևանի պետական համալսարանի 2009/2010-2013/2014 ուսումնական տարիների զարգացման ռազմավարական ծրագրի հիմնադրույթները՝ համաձայն հավելվածի:

Կողմ`66, Դեմ` 0, Զեռնպահ`0:

## 5. Ընթացիկ հարցեր

Խորհրդի նախագահը ընթացիկ հարցերի վերաբերյալ առաջարկություններ չներկայացրեց: Ընթացիկ հարցեր չառաջարկվեցին նաև խորհրդի անդամների կողմից:

**Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) - Այսպիսով խորհրդի նիստը համարենք ավարտված, շնորհավորում եմ բոլորիդ մոտեցող Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոնների կապակցությամբ, ցամկանում եմ Զեզ, Զեր ընտանիքներին, Զեր մտերիմներին առօղջություն, երջանկություն: Ցամկանում եմ, որ 2009թ.-ին մենք ունենանք ավելի շատ երջանիկ, ուրախ պահեր, ցամկանում եմ, որ մենք 2009թ.-ը ամփոփելիս կարողանանք համոզված ասել, որ հասել ենք որոշակի հաջողությունների: 2008թ.-ը փորձություններով, մարտահրավերներով լի տարի էր: Նախորդ տարի չորս մեծ իրադարձություններ են եղել, որոնցից յուրաքանչյուրը կարող էր ճակատագրական լինել մեր երկրի համար, բայց, փառք աստծո, որ մենք կարողացել ենք քիչ կորուստներով դուրս գալ այդ փորձություններից, դիմակայել առկա մարտահրավերներին, ստեղծել շատ լուրջ նախադրյալներ, որ հաջորդ տարիները կարողանանք օգտագործել որպես մեր երկրի, մեր պետության համար զարգացման տարիներ: Մոտակա ամիսների ընթացքում համոզված եմ, որ Զեզ մոտ էլ վստահություն կառաջանա, որ նկարագրվող սև, մշայլ գույնները իհարկե առկա են, բայց մեր ներկապնակում գերակշռող չեն: Բոլորիդ բարձր տրամադրություն և առաջ դեպի 2009 թվական:**

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

25.12.2008թ.

ք. Երևան